Նազիկ Գաբրիելյան (ՌԴ), աշխարհագրական
գիտությունների թեկնածու, հետազոտող

ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

էթնիկ ինքնության հիմնախնդիրը վերջին մի քանի տասնամյակում բազմաթիվ գիտությունների կողմից ակտիվ ուսումնասիրվող խնդիրների շարքում է: Այն ավելի է կարևորվում արդի համաշխարհայնացման գործընթացների պայմաններում, երբ առանձին խմբեր ու անհատներ ստիպված են լուծել տարբեր, երբեմն նույնիսկ մշակութային պրակտիկաների ու սոցիալական վարքի կազմակերպման տեսանկյունից հակասական խնդիրներ. նոր միջավայրում, բնակության նոր վայրում ինտեգրացիայից մինչև ինքնության ու ազգային դիմագծի պահպանում այլէթնիկ միջավայրում:

Սանկտ-Պետերբուրգի հայկական համայնքը ևս բացառություն չէ: Ձևավորվելով քաղաքի հիմնադրմանը գրեթե զուգընթաց՝ այն կարևոր դեր է ունեցել և՛ Ռուսաստանի, և՛ հայրենիքի մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքում:

Մեր օրերում միգրացիոն գործընթացների ակտիվության պայմաններում համալրվում ու ավելի «բազմադեմ» է դառնում քաղաքի հայկական համայնքը, աճում է նաև առանձին կազմակերպությունների նշանակությունը էթնիկ ինքնության և ինքնագիտակցության ամրապնդման գործում: Վերջիններս եղել են և շարունակում են մնալ այլէթնիկ միջավայրում հայերի համախմբման, հայերենի ուսուցման, հայեցի դաստիարակության կենտրոններ: Այդ առումով առանձնանում է հատկապես Սանկտ-Պետերբուրգի Հայ Առաքելական եկեղեցուն կից գործող Լազարյանների անվան հայեցի դաստիարակության կենտրոնը, որը համախմբում է ոչ միայն Սանկտ-Պետերբուրգում և Լենինգրադի մարզում ապրող երեխաներին, այլև նրանց ծնողներին՝ ստեղծելով հաղորդակցվելու, սոցիալականացման գործընթացներում ընդգրկվելու հնարավորություն:

Այն ներկայիս շենքում գործում է շուրջ քսաներկու տարի: Մինչ այդ այն հովվատան է եղել՝ մի սենյակի մեջ, ուր մի անկյունում փոքր երեխաներն են տառերը սովորել, մյուս անկյունում էլ այն երեխաները, որոնք հայերենին լավ են տիրապետել: Դա տևել է մեկ տարի: Այժմ կենտրոնի կիրակնօրյա դպրոցում աշխատում է տասնվեց մանկավարժ, աշակերտների թիվը հասնում է հարյուր հիսունի: Դպրոցը սկսվում է նախապատրաստական դասարանով և ավարտվում վեցերորդ դասարանով: Եթե առաջին տարիներին դպրոցում դասավան-

դում էին հիմնականում էնտուզիաստները, հայերեն իմացողները, օրինակ՝ տնարարության ուսուցիչը դասավանդում էր հայոց լեզու, ապա արդեն 1994-1995 թթ. մանկավարժները հիմնականում ունեին մասնագիտական կրթություն: Օրինակ՝ դպրոցի ուսմասվարը նախկինում եղել է Գյումրիի միջնակարգ դպրոցներից մեկի ուսմասվար: 2015-2016 ուստարվա առաջին դասարաններից մեկում դասավանդում էր Վանաձորի մանկավարժական համալսարանի նախկին դասախոսներից մեկը, ով մանկավարժական գիտությունների թեկնածու է: Նախադպրոցական խմբում (դասարանում) դասավանդում է բազմամյա փորձով մի մանկավարժ, որը նույնիսկ խոսելու խնդիրներ ունեցող երեխային հասցնում է այնպիսի մակարդակի, որ մեկ տարի հետո երեխան կարող է լիարժեք հաճախել առաջին դասարան: Դպրոցում դասավանդվում են հետևյալ առարկաները՝ տառուսուցում, հայոց լեզու, գրականություն, հայրենագիտություն, հայ ժողովրդի պատմություն, եկեղեցու պատմություն, երգ-երաժշտություն, գոբելեն, ծեփագործություն: Կենտրոնում գործում են նաև մշակութային խմբակներ. պարի, վոկալ համույթ, դուդուկահարների, քանոնի, կիթառի, դհոլի: Այս խմբերը հայտնի են քաղաքում և մասնակցում են տարբեր միջոցառումների, հյուրախաղերի: Այս ծանոթ և կանխատեսելի միջավայրի ստեղծումը շատ կարևոր է նոր միգրացիոն հոսքերի արդյունքում հաստատված անհատի համար[479]:

Այն հիմնական խնդիրներից մեկը, որ լուծում է այս կենտրոնը, հային իր արմատներին մոտ պահելն է: Երեխան, տիրապետելով հայերենին, իմանալով սեփական ազգի պատմությունը, ազգային սովորույթները, եկեղեցու պատմությունը, կարողանում է այլ դպրոցներում եղած հարցադրումներին տալ ճշգրիտ պատասխաններ: Նույնիսկ ռուս մանկավարժներին բացատրում է, թե ինքն ով է՝ դրանով փոխելով վերաբերմունքը իր հանդեպ: Կարողանում է ներկայանալի լինել: Ծանոթանալով սեփական պատմությանը և մշակույթին՝ կարողանում է հայի տեղը ցույց տալ աշխարհում:

Հայտնի քաղաքական և տնտեսական իրադարձությունների արդյունքում ավելի է ակտիվացել միգրացիան Հայաստանից: Միգրացիոն հոսքերի ընդունման գլխավոր կենտրոնները շարունակում են մնալ դաշնային նշանակության քաղաքները: Վերջին տարիներին դրսևորվող միտումներից է այն, որ տեղի է ունենում ընտանիքի վերամիավորման գործընթաց, որի արդյունքում միգրացիոն հոսքերում ներգրավվում են նաև կանայք և երեխաները, հետևաբար

[479] Борисова О.А. Ускользающая идентичность или анализ категории «идентичность» в рамках структурно-конструктивного подхода http://vestnik.udsu.ru/2006/2006-03/.

երեխաների համար բարենպաստ սոցիալական միջավայրի ձևավորման անհրաժեշտություն է առաջանում: Այս առումով էլ ավելի է կարևորվում նման կենտրոնների առկայությունը:

Ներկայումս էթնիկ ինքնության պահպանման կամ ազգային մշակույթին ծանոթ լինելու հիմնախնդիրներ առկա են նաև այն երեխաների մոտ, որոնք ծնվել են Սանկտ-Պետերբուրգում. նրանք դպրոցում մեծամասնություն են կազմում: Շատ դեպքերում ծնողներին անհանգստացնում է հայերենի մոռացության հարցը: Այս երեխաները ձգտում են վերականգնել, առանձին դեպքերում սովորել հայերեն, ինչը մի շարք խնդիրներ լուծելուց բացի, երեխային հնարավորություն է տալիս «օտար» - «յուրային» համակարգում լինել առավել ինքնաբավ: Այս առումով կիրակնօրյա դպրոցը հնարավորություն է ընձեռում երեխաներին՝ ծանոթանալով սեփական մշակույթին, ներկայանալի լինել օտար մշակութային համակարգում՝ ձգտելով պահպանել էթնիկ ինքնատիպությունը: Ուշագրավ է, որ նման ձգտում առկա է նաև խառնամուսնական ընտանիքներում, որտեղ ամուսինը հայ է: Ռուս կանայք սեփական նախաձեռնությամբ ձգտում են իրենց երեխաներին մոտեցնել հայ մշակույթի տարրերին: Կան օրինակներ, երբ երեխան հաճախում է կիրակնօրյա դպրոց միայն այն պատճառով, որ ազգանունը վերջանում է յան-ով. ընտանիքում հայերեն չեն խոսում, սակայն ինքն անպայման ուզում է տիրապետել հայոց լեզվին:

Խոսքի մշակույթի զարգացման տեսանկյունից հատկապես միգրանտների առաջին սերունդը բախվում է մի շարք խնդիրների: Ակնհայտ է, որ միայն ընտանեկան միջավայրը բավարար չէ լեզվական խնդիրները լուծելու համար: Այլէթնիկ միջավայրում երեխան կանգնած է ավելի մեծ դժվարություններ հաղթահարելու խնդրի առջև: Երկլեզու միջավայրում գտնվող երեխայի համար խիստ անհրաժեշտ է գտնվել և՛ հայերենը, և՛ ռուսերենը կրողների միջավայրում. նշված կենտրոնը ևս այս խնդիրը լուծելու հնարավորություն է տալիս: Այսինքն՝ այս դեպքում կենտրոնը լուծում է երկու խնդիր. հայերենի ուսուցման և իմացության, նաև՝ ռուսերենին ոչ այնքան վաղ տիրապետողների համար՝ ռուսերեն սովորելու:

Սակայն պետք է նշել, որ շատ ավելի արդյունավետ կլիներ նմանատիպ խնդիրները հաղթահարելու համար առավել վաղ տարիքի երեխաների համար կիրակնօրյա կենտրոններ ստեղծելը: Նշված կենտրոնում եղել են փորձեր՝ ավելի փոքր տարիքի երեխաների ընդգրկելու նախադպրոցական խմբերում, և ներկայումս էլ վերականգնվում է այդ ավանդույթը: Հեռանկարում հնարավոր է նաև մանկապարտեզի բացումը:

Կարևոր է նաև քրիստոնեական դաստիարակություն ստանալը, ինչը հնարավորություն է ընձեռում կողմնորոշվել ժամանակակից բազմակրոն աշխարհում:

Դպրոցը սերտ կապեր ունի այլ կրթամշակութային կազմակերպությունների, այդ թվում նաև քաղաքի թիվ 269 լիցեյի հետ: Այնտեղ ընդունված է առաջին դասարանից մինչև չորրորդ դասարան ներկայացնել որևէ ազգի: Այն դասարանում, որտեղ սովորում է հայ երեխա, որոշել են ներկայացնել հայերին: Ծնողները Հայաստանում պատվիրել են ազգային երեսուն տարազ: Երբ հայ երեխան բեմ է բարձրացել Հայաստանը ներկայացնելու նպատակով, նրա ընկերները մոտեցել են նրան՝ ասելով, որ իրենք են ուզում ներկայացնել Հայաստանը, և ամբողջ դասարանը ներկայացրել է Հայաստանը: Ելույթ են ունեցել կենտրոնի պարի խումբը, դհոլահարուհին, իսկ այս տարի արդեն դուդուկն են ներկայացնելու: Լիցեյից արդեն երկու անգամ աշակերտները, մանկավարժներն ու ծնողները այցելել են կիրակնօրյա դպրոց, հայկական եկեղեցում մոմ են վառել, խաչքարի մոտ ծաղիկ դրել: Դպրոցի սաներն ու մանկավարժները պատմել են Ցեղասպանության, ընդհանրապես՝ հայ համայնքի մասին: Երկրորդ այցելության ժամանակ արդեն իրենք եկել են «մշակութային նվերներով»՝ բերելով մոտրյոշկաներ, ներկեր, վրձիններ, և կենտրոնի երեխաներին սովորեցրել են մոտրյոշկա պատրաստել: Համատեղ դաս են անցկացրել, որից հետո այցելած երեխաներին սովորեցրել են արև, բարև բառերը, մի քանի այլ բառեր ևս: Բնականաբար, այսպիսի իրադարձություններից հետո ռուս երեխան երբեք չի ասի՝ հայը ո՞վ է և կամ նրան օտար չի համարի: Սա նաև մշակույթների հաղորդակցության, մշակութային արժեքների փոխանակության յուրօրինակ մեխանիզմ է, որը հնարավորություն է տալիս բավականին կայուն հիմքեր ստեղծել տարբեր տեսակի ատյացությունների հաղթահարման համար: Առավել քան ակնհայտ է, որ բազմէթնիկ միջավայրում տարբեր մշակույթներին ծանոթ լինելը նաև յուրօրինակ հարգանք է ձևավորում այն կրողների հանդեպ, այսպիսով՝ թույլ տալով նաև ավելի կառուցողական հիմքերի վրա դնել միջէթնիկ հարաբերությունները:

Կապերը կարևոր են նաև այլ քաղաքներում գործող կիրակնօրյա դպրոցների հետ: Տվերի, Նովգորոդի կիրակնօրյա դպրոցների մանկավարժները և երեխաները այցելել են դպրոց: Նմանատիպ այցելությունները հնարավորություն են տալիս երեխաներին հասկանալ, որ իրենք մենակ չեն, որ այլ վայրերում ևս կան նման կենտրոններ և դպրոցներ: Շատ կարևոր է նաև կապը հայրենիքի հետ, ինչն ավելի հաստատուն է դարձնում նշված խնդիրների հաղթահարումը:

Վերջին տասը տարիների ընթացքում հիմնական առաջընթացը, որ տեղի է ունեցել դպրոցում, երեխաների ստացիոնար հաճախումն է: Եթե նախկինում հաճախում էին մեկ տարի, երկու տարի,

ապա ներկայումս գրեթե բոլոր աշակերտները հաճախում են մինչև վեցերորդ դասարան, և դպրոցն ավարտում են ավարտական քննությամբ: Բավական է նշել, որ այս տարի դպրոցն ունի երեք առաջին դասարան, յուրաքանչյուրում տասնութից-քսան աշակերտ:

Բացի քննարկվող դպրոցից՝ վերջին տարիներին Լենինգրադի մարզում բացվել են նաև նոր կիրակնօրյա դպրոցներ՝ Վիբորգում, Պուշկինում: Եթե մինչև այդ նշված քաղաքներից երեխաները գալիս էին Սանկտ-Պետերբուրգ, ապա այժմ կիրակնօրյա դպրոցներ հաճախելու հնարավորություն ունեն նաև այն երեխաները, որոնք հնարավորություն չունեին այդքան երկար ճանապարհ կտրելու: Միտումներ կան Լենինգրադի մարզի տարբեր քաղաքներում ևս բացել նոր կիրակնօրյա դպրոցներ: Այս ամենը կարևոր է այնքանով, որ սեփական պատմությունը իմանալով, սեփական մշակույթի առանձնահատկությունները հասկանալով և ներկայանալի դարձնելով կարելի է լինել առավել լիարժեք քաղաքացի տվյալ երկրի համար: Կարևոր է նաև այն, որ ընդունող երկրում, այս դեպքում՝ Ռուսաստանի Դաշնությունում, նման հնարավորություններ տրվում են:

Կիրակնօրյա դպրոցը, մի շարք խնդիրներ լուծելով հանդերձ, բնականաբար, չի կարող երեխաներին տալ լիարժեք հանրակրթական կրթություն: Հայերենի ուսուցման, հայկական մշակութային միջավայրի հետ կապերի պահպանման և ամրապնդման, օտարալեզու միջավայրում, հատկապես միգրանտների ադապտացման խնդիրների հաղթահարման տեսանկյունից առանձնանում է Սանկտ-Պետերբուրգի թիվ 259 հանրակրթական դպրոցը: Երբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի մոտ հղացավ նման դպրոցում հայերենի ուսուցման գաղափարը, քաղաքի մշակույթի կոմիտեն հատկացրեց այս դպրոցը: Այն համարվում էր փակվող դպրոց, քանի որ գտնվում էր այնպիսի վայրում, ուր նոր շենքեր չէին կառուցվում, երիտասարդ ընտանիքներ չկային, ծնելիությունը ցածր էր: Դպրոցում սովորում էր շուրջ հարյուր հիսուն աշակերտ: Դպրոցը տրամադրելուց ամիսներ անց գրանցվեց աշակերտների թվի որոշակի աճ հիմնականում հայ աշակերտների հաշվին. աշակերտների թիվը հասավ երկու հարյուր քսանի: Ներկայումս աշակերտների թիվն արդեն հասնում է շուրջ երկու հարյուր հիսունի, որից մոտ երեսունհինգ տոկոսը հայեր են: Սկզբնապես հայերենի դասավանդումը ըստ ցանկության էր, ոչ այնքան հետևողական. անցնում էին միայն առաջին դասարանում: Չնայած ծնողներից շատերի ցանկությանը՝ հաջորդ դասարաններում ևս հայերենի ուսուցման հնարավորություն չկար: Հետո փորձ արվեց դասավանդել նաև բարձր դասարաններում, սակայն այն ևս արդյունավետ չէր, քանի որ երեխաները տառաճանաչ չէին, բավական դժվարություններ էին ստեղծվում: Հինգ տարի առաջ արդեն առաջին

այբբենարանի հանդեսն արվեց, և ակնհայտ դարձավ, որ ավելի լավ է դասավանդելը սկսել առաջին դասարանից և շարունակել: 2015 թ. արդեն կրթության կոմիտեի կողմից արտադասարանական կրթության տարբերակով, դասացուցակով հայերենը հաստատվեց այս դպրոցում շաբաթական երկու ժամով: Որպեսզի հայերենը դասավանդվի բոլոր դասարաններում, հայ աշակերտների թիվը պետք է ավելանա ներկայիս շուրջ երեսունհինգ տոկոսից: Առայժմ այն դասավանդվելու է մինչև հինգերորդ դասարան:

Շատ ծնողներ երեխաներին քաղաքի տարբեր մասերից բերում են այս դպրոց նաև այն նպատակով, որ այստեղ հայերեը ևս պետք է ուսումնասիրեն:

Դպրոցում հայերենի ուսուցումը համարվում է պարտադիր հայ երեխաների համար, սակայն լինում են դեպքեր, երբ անգամ ռուսներն են հաճախում այդ դասերին, բացի այդ գործում են նաև խմբակներ, որտեղ ուսուցանվում են հայ մշակույթի տարրերը: Էթնիկ ինքնության ամրապնդման խնդիրները լուծելուց բացի՝ դպրոցը հնարավորություն է տալիս հանրակրթական դպրոց հաճախել բոլոր այն երեխաներին, հատկապես վերջին միգրացիոն հոսքերում ընդգրկվածներին, որոնք կանգնած են որոշակի դժվարությունների առջև, առաջին հերթին լեզվի իմացության հետ կապված: Այն հնարավորություն է ընձեռում նաև հաղթահարել ադապտացման դժվարությունները: Լինում են դեպքեր, երբ այս դպրոց են տեղափոխվում այլ դպրոցներում ադապտացման խնդիրներ ունեցող հայ երեխաները: Այն կարևորագույն խնդիրրներից մեկը, որ լուծում է այս դպրոցը այն է, որ Ռուսաստանում ապրող այլ ազգերի ներկայացուցիչները, այդ թվում նաև հայերը կարողանում են իրենց զգալ այս սոցիումի մի մասնիկը:

Այդ է պատճառը, որ քաղաքի տարբեր մասերից հայերից բացի գալիս են նաև այլ ազգությունների ներկայացուցիչներ: Հիմնականում այն պատճառով, որ դպրոցում հանդուրժողականության բարձր դրսևորում կա, օգնում են երեխաներին հաղթահարել լեզվական շեմը՝չկտրելով ուսումնական պրոցեսից: Երեք-չորս ամիս երեխաներին պահելով ակտիվ միջավայրում՝ մանկավարժները ռուսերենին ազատ տիրապետելու հնարավորություն են ընձեռում:

Քանի որ դպրոցում շատ հայ երեխաներ կան, ստացվում է այնպես, որ ամբողջ դպրոցը կապված է հայ համայնքի հետ, այն իմաստով, որ մեծ միջոցառումների, մեծ ցուցահանդեսների ժամանակ այս դպրոցի աշակերտների մեծ մասը մանկավարժների հետ ներկա են գտնվում: Ընդ որում, ազգային խտրականություն չի դրվում: Այս տեսանկյունից դպրոցը համարվում է օրինակելի: Չէ որ երեխաները տարբերվում են նաև ըստ կրոնական պատկանելության, և նրանք չպարտադրված գնում են հայկական եկեղեցի: Դպրոցը համարվում է բազմազգ: Աշակերտների շուրջ կեսը միգրանտ է, կան

շուրջ մեկ տասնյակ ազգությունների ներկայացուցիչներ՝ ռուսներ, հայեր, ղրղզներ, տաջիկներ, ուկրաինացիներ, մոլդավացիներ, ադրբեջանցիներ, ուզբեկներ, տիվացիներ, բաշկիրներ, թաթարներ և այլ ազգեր: Բացի նրանից, որ այս բազմազգ դպրոցում սովորողներն ունեն տարբեր էթնիկ մշակույթներ, լեզու, նրանք տարբերվում են նաև որպես անհատ, տարբեր արժեքների, աշխարհայացքի, մտածողության, կենսակերպի կրողներ են: Դպրոցը ձևավորում է անհատի կապի գիտակցումը շրջակա բազմաշերտ աշխարհի հետ, օգնում է այլազգի երեխաներին, այդ թվում հայերին ավելի հեշտ ապրել այս բազմազգ երկրում: Շատ դեպքերում ադապտացիայի ենթարկվող երեխաները, ճակատագրի բերումով հայտնվելով այլ երկրում, իրենց կաշկանդված են զգում, կարոտում են իրենց ընկերներին, չեն կարողանում իրենց իրացնել, բայց երբ տեսնում են, որ այստեղ էլ նոր ընկերներից իրենք չեն տարբերվում, կարողանում են բացահայտել իրենց ներքին հնարավորությունները:

Դպրոցը երկու կարևոր խնդիր է լուծում միգրացիոն հոսքերում ընդգրկված երեխաների համար: Հայրենիքից մեկնող երեխան կարողանում է հարմարվել նոր միջավայրին և ստանում է բավարար չափով գիտելիքներ, ինչը հայրենիք վերադառնալու դեպքում ևս յուրայինների մեջ օտար չզգալու հնարավորություն է տալիս: Բավական է նշել, որ 2016 թ. օգոստոսից մինչև հոկտեմբեր դպրոցն ընդունել է Հայաստանի 25 քաղաքացու: Ավելորդ դժվարություններից խուսափելու համար կարևոր է, որ երեխան գոնե ներկայանա համապատասխան փաստաթղթերի փաթեթով:

Հիմնական խնդիրները, որոնք առկա են դպրոցում, բնորոշ են գրեթե բոլոր հանրակրթական դպրոցներին: Այս դպրոցի համար կարևոր է նաև հաղորդակցության միջոցների բացակայությունը: Եկեղեցու հովանավորությամբ երթուղային տաքսին դպրոցի աշակերտներին մետրոյի կայարանից տեղափոխում է դպրոց: Հայրենիքի հետ կապը ապահովելու նպատակով ցանկալի կլիներ կազմակերպել այց Հայաստան այն երեխաների համար, որոնք ընդհանրապես չեն եղել Հայաստանում և չունեն այդպիսի հնարավորություն: Բացի դրանից՝ դպրոցները ունեն դասագրքերի և առանձին խմբակների համար տարազների ձեռքբերման անհրաժեշտություն: Ընդ որում, նմանատիպ խնդիրների լուծումը պետք է հետևողական լինի: Մանկավարժների որակավորման բարձրացման նպատակով արդյունավետ կլիներ մասնագետի գործուղումը կիրակնօրյա դպրոց:

Համայնքի հայկական մշակույթի, ընդհանարապես էթնիկ ինքնության պահպանման և փոխանցման հետ կապված մեծ նշանակություն ունի հյուրախաղերի կազմակերպումը:

Ամփոփելով նշենք, որ նման կազմակերպությունները, ունենալով էթնիկ ինքնության պահպանման, փոխանցման և ամրապնդման

որոշակի մեխանիզմներ, հնարավորություն են ընձեռում անհատին, տվյալ դեպքում նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներին հետագայում որպես հայ զգալ և գործել համայնքի համար, ինչը չի խանգարի առօրեական կյանքում գործել և որպես տեղի մշակույթի կրող, տվալ դեպքում որպես սանկտ-պետերբուրգցի: Այսինքն՝ էթնիկությունը կարող է լինել որոշակի սոցիալ-մշակութային համակարգում գտնվող և ընտրողաբար օգտագործվող ռեսուրս[480], ինչը իր հերթին էթնիկ խմբին հնարավորություն է ընձեռում հաստատել և ամրապնդել իր սահմանները այլէթնիկ միջավայրում:

Назик Габриелян (РФ), ***Роль Армянских организации Санкт-Петербурга в деле сохранения и передачи этнической идентичности.*** Проблема этнической идентичности в последние десятилетия активно исследуется общественнными науками в числе других важных проблем. Идентичность, способы и механизмы ее выражения становятся более важными в условиях активной глобализации, когда миллионы людей вовлечены в миграционные процессы и следовательно, должны решать разные проблемы: начиная от интеграции в новое пространство и кончая проблемами сохранения культурной самобытности. Армянская община Санкт-Петербурга не исключение. Формируясь фактически одновременно с городом, она в течение десятилетий сыграла очень важную роль как в жизни самого города, так и в деле сохранения разносторонних связей с Арменией. В наши дни, в условиях активизации миграционных процессов, армянская община города становится как-будто ‘’многоликим’’. В таких условиях возрастает также роль отдельных национальых организаций для сохранения этничности и этнической идентичности. Эти организации были и продолжаются оставатся своего рода центрами воспитания, обучения армянскому языку и армянской культуре в иноэтнической среде. Действующий при Армянской Апостольской Церкви центр воспитания армянских детей имени Лазаревых играет очень важную роль: она обеспечивает знание родного языка и культуры не только для детей из города, но и Ленинградской области. Фактически такую же проблему решает изучение армянского языка в общеобразовательной

---

[480] Бунаков М.Ю., Лукин В.Н., Национализм и национальная идентичность в условиях глобализации: проблемы концептуализации http://cedonew.ru/content/vew/553/58, Степаненко Т.Г., Социально-психологические аспекты изучения этнической идентичности, 1999 http://flogiston ru/articls/social/etnic,1999

школе н. 259. Такие центры и организации решают очень важные задачи, обеспечивая не только знание родного языка и культуры, но более “мягкую” интеграцию в новую этнокультурную среду, а также понимание и уважение с принимающей стороны. В статье указанные и другие аспекты как сохранения самобытности, так и итеграции рассматриваются на примере указанных центра и школы.

Nazik Gabrielyan (RF), *The role of Armenian organizations of Saint-Petersburg in ethnic identity maintenance and transmission*. The issues around ethic identity is among most discussed in the scope of social sciences. Groups and individuals are now faced number of issues from integration to keeping of ethnic identity in foreign environment in the current stage of globalization. Saint Petersburg’s Armenian community is not an exception. While being developed along with the establishment of the city it has always contributed the economic and cultural achievements in Russia and Armenia. Currently, due to extensive migration rates the Armenian community of Saint Petersburg is becoming more multi-faced with following increase of the role of particular community based cultural organizations. These organizations were and are still the centers of consolidation for Armenians, for teaching Armenian language and passing Armenianness from generation to generation.